ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՁԵԿՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

ՄԵԼԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ
meline.grigoryan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Յայտնի է, որ կրթութեան առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ՀՀ կրթական համակարգը գտնուում է փոփոխութիւնների ընթացքում, քանի որ դեռ այս համակարգը կայացման փուլում է, որն ըստ էութեան բնական, նոյնիսկ անհրաժեշտ երեւոյթ է[1]:

Փաստացիօրէն, ՀՀում արդէն երկրորդ տասնամեակն է, որ ներառական կրթութեան (ՆԿ) գործընթացն իրականացուում է արտերկրեայ ՆԿի առաջադէմ փորձի փոխանցում-տեղի պայմանների փոփոխում-յարմարեցումի[2] հիման վրայ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս այս ոլորտի մասնագէտներն են փաստում[3] իւրաքանչիւր գործընթաց բնականաբար, անցնում է փոփոխութիւնների միջով՝ հասնելով նպատակային արդիւնքին: Նոյնն էլ ներառման գործընթացում է իրականանում՝ անցնելով գաղափարային, օրէնսդրական եւ այլ փուլերով. այսօր առկայ է ներառական կրթութեան կառավարման (ՆԿԿ) խնդիրը, քանի որ ներառման գործընթացը շարունակւում է եւ ընդլայնուում, իսկ դրա կառավարման հիմնահարցը՝ սրուում: Տեղական համապարփակ համակարգի անլիարժէքութիւնը, ուսումնադաստիարակչական եւ այլ աշխատանքների, յստակ, օրինակելի ձեւի, ծրագրի բացակայութիւնը դժուարացնում են ՆԿԿին ուղղուած աշխատանքների իրականացումը, ինչպէս նաեւ խոչընդոտում են յատուկ միջոցների, մեթոդների ու պայմանների ստեղծումն ու իրականացումը:

Հետեւաբար, այն արդիւնաւէտ կազմակերպելու համար, անհրաժեշտ է ներառական գործընթացի ճիշտ կառավարում: Գիտամեթոդական գրականութեան մէջ արդէն իսկ կան բազմաթիւ նշումներ որոնցում պարզ ընդգծուած է, որ համապատասխան ձեւերի, բովանդակութեան մշակումը կը նպաստի ՆԿԿի աշխատանքի արդիւնաւէտ կազմակերպմանն ու անցկացմանը:

Այդ պատճառով տուեալ հետազօտութեան առջեւ խնդիր է դրուել ուսումնասիրել եւ վերլուծել ՀՀ հանրակրթական դպրոցներում ՆԿԿի դրուածքը: Մեզ հետաքրքրում էր, թէ դպրոցների մանկավարժներն ի՛նչ են հասկանում ՆԿԿ ասելով, ինչ տեղ են յատկացնում ՆԿԿին, կարեւորու՞մ են, թէ՞ ոչ, դպրոցում ո՞վ է զբաղւում կառավարման հարցերով, արդեօք կա՞ն ծրագրաւորման եւ հաշուետուութեան կառավարման փաստաթղթեր, արդեօք ՆԿԿի հարցը քննարկուո՞մ է մանկավարժական խորհրդում, ինչպէ՞ս կը գնահատէին իրենց դպրոցում ՆԿԿն եւն.: Այս հարցերի լուծումը կ'օգնի ՆԿի արդիւնաւէտ կառավարմանը, որովհետեւ ներառական գործընթացին վերաբերող աշխատանքներն իրականացւում են, սակայն, հանրապետութիւնում դեռեւս չկան գիտականօրէն մշակուած յստակ մօտեցումներ, ՆԿԿի վերաբերեալ փաստաթղթեր, ծրագրեր եւն.:

Սոյն հետազօտութիւնն անցկացուել է հանրակրթութեան 57 ՆԿ իրականացնող դպրոցներում: Այդ նպատակով Երեւանում եւ Արմաւիր, Արագածոտն, Տաւուշ, Գեղարքունիք, Լոռի եւ Շիրակ մարզերում.-

- Ուսումնասիրել ենք ՆԿԿին վերաբերուող փաստաթղթերը,
- Զրոյցներ ենք ունեցել մանկավարժական խորհրդի անդամների հետ՝ ՆԿԿի հարցերի վերաբերեալ,
- Ծանօթացել ենք մանկավարժական խորհրդի արձանագրութիւններին, ՆԿԿի վերաբերեալ անցկացուած միջոցառումներին եւն.,
- Ձեռնարկել ենք մի շարք մանկավարժական դիտումներ՝ ինչպէս առարկայական դասերի («հայոց լեզու եւ գրականութիւն», «ուսողութիւն» եւն.), այնպէս էլ ուսումնադաստիարակչական եւ զարգացնող պարապմունքների եւ դասպատրաստման ժամանակ,
- Ուսումնասիրել ենք բազմամասնագիտական թիմի աշխատանքները, դրանց կազմակերպումը եւ իրականացումը,
- Ծանօթացել ենք աշխատանքային ծրագրերին, որտեղ կատարւում են նշումներ ՆԿԿի հարցերի շուրջ:

ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Կազմակերպել եւ անցկացրել ենք զրոյցներ, հարցումներ, ինչպէս ներառական դպրոցների 57 տնօրէնների, 107 ուսումնադաստիարակչական եւ կազմակերպչական գծով փոխտնօրէնների, 49 դասղեկների, 94 ուսուցիչների, այնպէս էլ դպրոցներում մեթոդական խորհրդի անդամների հետ: Այս խնդիրների լուծման համար մեր կողմից մշակուել են ընկերաբանական հետազօտման յատուկ հարցաթերթիկներ:

Այս հետազօտութիւնների հետ մէկտեղ անցկացրել ենք նաեւ ՆԿԿի արտասահմանեան փորձի ուսումնասիրութիւն եւ վերլուծութիւն, որից

պարզ է դարձել, որ նմանատիպ հիմնախնդրի տեսական եւ գործնական անբաւարար մշակուածութիւնն էապէս բարդացնում է հանրակրթական դպրոցում առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, շտկման եւ զարգացման, ուսումնադաստիարակչական, ինչպէս նաեւ մանկավարժական աշխատանքների կազմակերպման ու անցկացման աշխատանքները:

Հետազօտութեան արդիւնքները վկայում են որ բոլորը ՆԿԿի վերաբերեալ ունէին թիւր եւ ոչ-յստակ պատկերացում եւ իրենց մօտեցումներն այս հարցին զանազան էին, սակայն իրենց խօսքի մէջ նշում եւ շեշտադրում էր դրա նշանակութիւնը եւ կարեւորութիւնը, քանի որ առանց այդ աշխատանքների կառավարման դժուար կը լինի արդիւնաւէտ ուսումնադաստիարակչական աշխատանքներ ծրագրաւորել, կազմակերպել եւ անցկացնել՝ առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար:

Շատ դպրոցներում, զրոյցների ընթացքում հարցուողներն անկեղծ նշում էին, որ ներառման հետ կապուած աշխատանքները կազմակերպուել եւ իրականացուել են պարագայաբար, առանց ծրագրումի, ոչ-մշտական, ոչ-գիտական հետազօտութիւնների, այլ՝ սեփական գիտելիքի եւ փորձի հիման վրայ:

Ինչպէս գիտենք՝ մանկավարժական խորհուրդը ըստ իր էութեան եւ բնոյթի ստեղծուած է որպէս դպրոցի կառավարման ենթակառոյց, որտեղ ուսումնական գործընթացի գիտամեթոդական ապահովման, զարգացման մի շարք աշխատանքների գործառնութիւններն ու ղեկավարումն է քննարկւում եւ իրականացւում: Սակայն, մանկավարժական խորհրդի անդամների հետ անցկացուած մեր զրոյցները վկայում են, որ ՆԿԿի ամբողջական համակարգը, կարծես թէ բաց թողուած է, քանի որ մասնագէտները իրականում չեն պատկերացնում այն աշխատանքային փաթեթը, որ ՆԿԿի համակարգն է պահանջում: Հարցազրոյցներից զատ, մեր կողմից ուսումնասիրուած 94 արձանագրութիւնները եւս գրեթէ զուրկ էին կառավարման բնոյթի տեղեկատուութիւնից:

Որոշ դասղեկների հետ զրոյցների եւ դիտարկումների ընթացքում պարզ է դառնում, որ իրենք ՆԿԿի աշխատանքները չեն ծրագրաւորում, հիմնականում այդ աշխատանքները կատարում են ուսուցիչները եւ նեղ մասնագէտները:

Տնօրէնների հետ զրոյցներից ակնյայտ դարձաւ, որ կառավարման հարցերը, մօտեցումները հիմնականում բացակայում են: Միայն որոշ տնօրէնների մօտ նկատեցինք գրանցումներ, որոնք ոչ թէ ՆԿԿի աշխատանքներին էին վերաբերում, այլ առանձին ցուցումներ էին՝ ուսուցիչներին ուղղուած: Ծրագրաւորման մատեաններ առհասարակ գոյութիւն չունեն:

Պարզ դարձաւ, որ հարցուողները ՆԿի եւ ՆԿԿի վերաբերեալ ունէին որոշակի պատկերացում, կրթութեան առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար աշխատանքային թիմով էին կազմակերպում ուսուցման, դաստիարակման գործընթացները: Սակայն, ՆԿԿի վերաբերեալ բոլոր հարցուողները չունէին լիարժէք պատկերացում: Տնօրէնները հիմնականում յանձնարարում էին ցուցումներ ուսումնադաստիարակչական եւ կազմակերպչական գծով փոխտնօրէններին, դասղեկներին, ուսուցիչներին, լրացուցիչ պարապմունքների նեղ մասնագէտներին (խօսքի զարգացման մասնագէտ, յատուկ մանկավարժ, հոգեբան), սակայն, յստակ ՆԿԿի հարցերը, մօտեցումները, ծրագրերը, ծրագրաւորումը, քննարկման հարցերը՝ գրեթէ բացակայում էին: ՆԿի վերաբերեալ կար որոշակի պատկերացում, իսկ ՆԿԿի մասին պատկերացումն ու տեղեկացուածութիւնը աւելի թոյլ էին (Նկար 1.):

Նկ. 1. **Հետազօտուողների վերաբերմունքի ուսումնասիրման արդիւնքների ցուցանիշներ**

Թերեւս, նկարից պարզ երեւում է, որ մեր կողմից հարցուող 57 տնօրէններից 91.4%ը ՆԿի վերաբեեալ ունի դրական վերաբերմունք, իսկ ՆԿԿին վերաբեալ միայն 63.8%ն ունի դրական վերաբերմունք: Իրականում այս ցուցանիշը սպասուածից առաւել էր, քանի որ զրոյցների ընթացքում պարզ էր դառնում, որ ՆԿԿի համակարգի մասին պատկերացում գրեթէ չուեն: Ուսումնադաստիարակչական գծով փոխտնօրէնների մօտ համեմատաբար ցածր էր ցուցանիշը ՆԿի վերաբերեալ՝ 53.6%, իսկ ՆԿի կառավարման՝ 51.2%: Կազմակերպչական գծով փոխտնօրէնների մօտ ՆԿի վերաբերեալ դրական վերաբերմունքը՝ 51.2%, իսկ ՆԿԿի վերաբերեալ՝ 48.7% է: Ուսուցիչների մօտ - ի տարբերութիւն փոխտնօրէնների - արդիւնքները բաւականին բարձր էին՝ ՆԿի վերաբերեալ ունէին դրական վերաբերմունք 76.5%, իսկ ՆԿԿին՝ 51%:

Ինչպէս վկայում է ՆԿԿի դրուածքի ուսումնասիրութիւնը, բոլոր հարցուողները դրական են վերաբերւում ՆԿին, դրա կառավարմանը, նշում են դրա կարեւորութիւնը, անհրաժեշտութիւնը, որն էլ ընդհանուր կառավարման արդիւնաւէտութեան ցուցանիշն է:

Մեր մանկավարժական դիտումները, զրոյցներն ու հարցումները ցոյց են տալիս, որ դպրոցների ուսուցիչների, տնօրէնների, փոխտնօրէնների գերակշռող մեծամասնութիւնը յենւում է ոչ թէ գիտականօրէն մշակուած մօտեցումների, այլ հիմնականում սեփական գիտելիքների ու փորձի վրայ: Իրենք նշում են, որ ՆԿԿն պէտք է իրականացնի դպրոցի տնօրէնը, նա պէտք է երեխաների յստակ բաշխում կատարի, ըստ դասարանների ճիշտ տարիքային դասակարգում իրականացնի, ծրագրաւորի եւ համատեղ կազմակերպի նեղ մասնագէտների աշխատանքային ժամանակացոյցը եւն.:

Հիմնականում տնօրէնները ՆԿԿի հարցերը դնում են ուսումնական պատասխանատուի, դասղեկի կամ ՆԿի համակարգողի վրայ, իհարկէ, եթէ, դպրոցում աշխատում է համապատասխան մասնագէտ: Այս հանգամանքը եւս կառավարման օղակ է դպրոցում, որը ըստ պատշաճի չի իրականացւում: Դասղեկների հետ զրոյցների ժամանակ նրանք նշում էին, որ իրենք անցկացնում են ՆԿի ծրագրաւորում, իրականացնում են կառավարման աշխատանքներ իրենց դասարաններում, չնայած յստակ ձեւ չունեն եւ կատարում են իրենց իմացածից ելնելով, դասարանի երեխաների տարիքային դասակարգում են կատարում:

Առանցքային էր նաեւ այն, որ հարցումների ժամանակ պարզ դարձաւ, որ շատ քչերն են ծանօթ ՆԿի գրականութեան հետ: Այս բնագաւառի նուաճումների, փորձի հետ առհասարակ ծանօթ չեն, քանի որ առօրեայ խնդիրները թոյլ չեն տալիս իրենց ինքնուրոյն հետազօտութիւն կատարել:

Այսինքն, այդ եւ նմանատիպ հիմնահարցեր չեն դարձել մանկավարժական խորհուրդի հիմնական քննարկման առարկայ, արձանագրութիւնները գրեթէ չեն խօսում ինչպէս կառավարման, նաեւ՝ այլ հարցերի քննարկման մասին:

Այսպիսով, հետազօտութեան արդիւնքները վկայում են, որ հետազօտուողները նշում են ՆԿի կարեւորութիւնը, դրա կառավարման անհրաժեշտութիւնը, սակայն, իրենց մեծամասնութիւնը չունի լիարժէք պատկերացում, թէ ով է պատասխանատու այդ գործընթացի համար կամ ՆԿԿի առանձին բաժինների համար, թէ ինչպէս պէտք է կազմակերպուի եւ անցկացուի դրա անհրաժեշտ ծրագրաւորման եւ հաշուետուութեան անհրաժեշտութիւնը եւ բովանդակութիւնը եւ մի շարք նման այլ հարցեր: Այս ամէնը վկայում է վերը նշուած հիմնահարցերի մշակման անհրաժեշտութեան մասին:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Յայտնի է, որ վերջին տարիներին ՆԿի եւ դաստիարակութեան համակարգում մեծ տեղ է յատկացուում արդիւնաւէտ միջոցների, մեթոդների եւ մանկավարժական պայմանների մշակմանը եւ ուսումնադաստիարակչական աշխատանքի մէջ արդիւնաւէտօրէն կիրառմանը: Այս տեսանկիւնից ՆԿԿի առանձնայատկութիւնների ուսումնասիրումը եւ այդ աշխատանքի կատարելագործման արդիւնաւէտ ուղիների մշակումն այսօր ունի կարեւոր նշանակութիւն:

Այս խնդրի կարեւորութիւնն որոշւում է նաեւ այն հանգամանքով, որ ՆԿի համակարգում ուսումնադաստիարակչական եւ զարգացնող աշխատանքները կը լինեն նուազ արդիւնաւէտ, եթէ կատարուեն ոչ-տեղեկացուած, բարձր որակաւորում չունեցող մասնագէտների կողմից: Այդ պատճառով, ընդհանուր եւ յատուկ մանկավարժութեան մէջ մեծ տեղ է յատկացուում դպրոցում զարգացման յապաղումներ ունեցող երեխաների հետ աշխատանքին ուսուցիչների եւ դասվարների մասնագիտական պատրաստուածութեան մակարդակին[4]:

Հետեւաբար, ՆԿ իրականացնող դպրոցների տնօրէնների, ուսումնական եւ դաստիարակչական գծով փոխտնօրէնների, դասղեկների, ուսուցիչների, դասվարների, ինչպէս նաեւ մանկավարժական համալսարանի բարձր կարգի ուսանողների, որպէս ապագայ մասնագէտների տեղեկացուածութեան մակարդակի ուսումնասիրումը եւ այդ դպրոցներում ՆԿԿի եւ ուսումնադաստիարակչական ու զարգացնող աշխատանքի դրուածքի ուսումնասիրումը դարձաւ տուեալ հետազօտութեան առարկան:

Մենք ձգտում էինք պարզել.-

- ներառական դպրոցների տնօրէնների, փոխտնօրէնների, դասղեկների, ուսուցիչների, դասվարների, ինչպէս նաեւ բարձր կարգի ուսանողների վերաբերմունքը ՆԿին եւ այդ գործընթացի կառավարմանը:
- տնօրէնները, փոխտնօրէնները, դասղեկները, ուսուցիչները, դասվարները, բարձր կարգի ուսանողներն ի՞նչ են հասկանում «ՆԿԿ» ասելով:
- Արդեօք արդիւնաւէտ համարու՞մ են դպրոցում ՆԿԿին ուղղուած աշխատանքները:
- Ինչպէ՞ս կը գնահատէին իրենց մասնագիտական պատրաստուածութիւնը ՆԿԿին համար:
- Ինչպէ՞ս կը գնահատէին դպրոցում ՆԿԿին ուղղուած իրենց աշխատանքները:
- Ինչպիսի՞ փոփոխութիւններ կը ցանկանային տեսնել ՆԿԿի կատարելագործման ոլորտում:

Վերոնշեալ եւ նմանատիպ հարցերի ուսումնասիրման համար մեր կողմից մշակուել են յատուկ հարցաթերթիկներ:

Ընդհանուր առմամբ հարցախոյզին (փաստական ցանկագրում, հարցում եւ զրոյցներ) մասնակցել են 394 անձեր Երեւանից, Արմաւիր, Արագածոտն, Տաւուշ, Գեղարքունիք, Լոռի եւ Շիրակ մարզերից: Դրանցից 57ը ՆԿ իրականացնող դպրոցների տնօրէններ, 107ը փոխտնօրէններ, 49ը դասղեկներ, 94 ուսուցիչներ եւ դաստիարակներ եւ 87ը համալսարանի բարձր կարգի ուսանողներ:

Հետազօտութեան մասնակցած ներառական դպրոցների տնօրէնների, փոխտնօրէնների, դասղեկների, ուսուցիչների եւ դասվարների 53.2%ը 25-40 տարեկան էր, 26.5%ը՝ 41-50, 20.3%ը՝ 51-60, իսկ մնացածները՝ 60 տարեկանից բարձր: Բոլորն ունէին բարձրագոյն մանկավարժական կրթութիւն. 31.4%ն ունէր 25 տարուայ մանկավարժական փորձ, 42.7%ը՝ 10-25 տարուայ, 25.9%ը՝ մինչեւ 10 տարուայ:

Յատկանշական է այն փաստը, որ մասնագէտների 46%ից աւելին 10-20 տարի աշխատում է նոյն դպրոցում:

Հետեւաբար կարելի է նշել, որ հարցուածների մեծամասնութիւնը բարձրագոյն որակաւորում ունեցող մանկավարժներ էին, մասնագէտներ, ովքեր ունէին մանկավարժի աշխատանքային փորձ:

Ըստ հետազօտութեան, ներառական դպրոցների 94.6% տնօրէններ, փոխտնօրէններ, դասղեկներ եւ ուսուցիչներ սիրում են իրենց մասնագիտութիւնը եւ սիրով աշխատում են դպրոցներում, որտեղ բնական զարգացում ունեցող աշակերտների հետ սովորում են կրթութեան առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ: Իսկ մանկավարժական համալսարանի բարձր կարգերի ուսանողների 81.3% ընդգծում է, որ գիտակցաբար է ընտրել մասնագիտութիւնը եւ ուսումն աւարտելուց յետոյ ցանկանում է աշխատել ներառական դպրոցներում:

Վերլուծելով հետազօտութեան արդիւնքները, վեր են հանուել հետաքրքիր եւ կարեւոր փաստեր ՆԿԿի տեսութեան եւ գործնական կիրառութեան համար:

Հարցեր	Հետազոտուողներ	Հետազոտութեան արդիւնքների գնահատում							
	Տնօրէն n=57 Ուս. Փոխտն. n=54 Դաստ. փոխտն=53 Դասղեկ n=49 Ուսուցիչ եւ դասվար n=94	Գերազանց, լաւ		Բաւրր.		Անբաւ.		Դժուարանում են պատասխանել	
								N	%
1	2							9	10
Ինչքան էք իրազեկուած ՆԿ հարցերի վերաբերեալ	Տնօրէն	46	80.7		7.0	-		7	12.3
	Ուս. փոխտնօրէն	40	74.1		11.1	-		18	14.8
	Դաստ. փոխտն.	38	71.7		15.1	-		7	13.2
	Դասղեկ	36	73.5		6.1			10	20.4
	Ուսուցիչ, դասվար	74	78.7		7.4	2	2.1	11	11.7
Ինչքան էք իրազեկուած ՆԿ կառավարման հարցերի վերաբերեալ	Տնօրէն	39	68.4		14.0	4	7.0	6	10.5
	Ուս. փոխտնօրէն	33	61.1	10	18.5	4	7.4	77	13.0
	Դաստ. փոխտն.	31	58.5		13.2	6	11.3	9	17.0
	Դասղեկ	30	61.2	5	10.2	5	10.2	9	18.4
	Ուսուցիչ, դասվար	60	63.8	12	12.8	8	8.5	14	14.9
Ձեր դպրոցում ՆԿԿ դրուածքի գնահատում	Տնօրէն	39	68.4	11	19.3	3	5.3	4	7.0
	Ուս. փոխտնօրէն	31	57.4	9	16.7	6	11.1	8	16.3
	Դաստ. փոխտն.	31	58.5	11	20.7	4	7.5	7	13.2
	Դասղեկ	29	59.2	8	16.3	4	8.2	8	16.3
	Ուսուցիչ, դասվար	57	60.6	20	21.3	7	7.4	10	10.6
ՆԿ կառավարմանը՝ դպրոցի ծրագրային փաստաթղթերի գնահատում	Տնօրէն	42	73.7	9	15.8	2	3.5	4	7.0
	Ուս. փոխտնօրէն	34	63.0	5	9.2	3	5.6	12	22.2
	Դաստ. փոխտն	32	60.4		11.3			15	28.3
	Դասղեկ	31	63.3	10	20.4		6.1	5	10.2
	Ուսուցիչ, դասվար	55	58.5	23	24.5		6.4	10	10.6
ՆԿԿի ձեր սեփական աշխատանքի գնահատում	Տնօրէն	47	82.4		8.8		3.5	3	5.3
	Ուսումն. փոխտն.	36	66.7		14.8		5.5	7	13.0
	Դաստ. փոխտն.	31	58.5		13.2		11.3	9	17.0
	Դասղեկ	29	59.2		14.3		8.2		18.3
	Ուսուցիչ, դասվար	60	63.8	18	19.1		5.3	11	11.7
ՆԿԿի շուրջ ուսուցիչ-յատուկ մանկավարժ համաձայնեցուած գործունէութեան գնահատում	Տնօրէն	44	77.2		15.8		7.0	-	-
	Ուս. փոխտնօրէն	46	85.2		3.7		3.7	4	7.4
	Դաստ. փոխտն.	43	81.1		5.7		3.8	5	9.4
	Դասղեկ	33	67.3		12.2		6.1		14.3
	Ուսուցիչ, դասվար	71	75.5		9.6		5.3		9.6
ԸՆԴԱՄԷՆԸ	Տնօրէն	43	75.4		14.0		3.5		7.0
	Ուս. փոխտնօրէն	37	68.5		13.0		5.5		13.0
	Դաստ. փոխտն.	34	64.1		13.2		5.7		17.0
	Դասղեկ	31	63.3		14.3		6.1		16.3
	Ուսուցիչ, դասվար	63	67.0	15	15.9		5.3	11	11.7

Աղիւսակից ակնյայտ է, որ, ներառական դպրոցների 57 տնօրէնների, 107 փոխտնօրէնների, 49 դասղեկների եւ 94 ուսուցիչների եւ դասվարների 84.7%ը դրական են վերաբերւում ՆԿին եւ կարծում են, որ բաւականաչափ իրազեկուած են այդ հարցերով, իսկ ՆԿԿի հարցերի դէպքում միայն 76.3%ը դրական պատասխանեց: Մնացածների 8.9%ը պատասխանեց, որ ՆԿԿի հարցերի շուրջ իրազեկուած չէ, իսկ 14.8%ը՝ դժուարացաւ պատասխանել: Մանկավարժական բուհի բարձր կարգի ուսանողների մօտ ՆԿԿի հարցերի վերաբերեալ իրազեկուածութեան մակարդակը առաւել ցածր էր (Նկար 2):

Նկ. 2. **ՆԿի եւ կառավարման հարցերի վերաբերեալ հարցուողների տեղեկացուածութեան մակարդակի ցուցանիշներ**

Նկարից ակնյայտ է, որ մանկավարժական բուհի բարձր կարգի ուսանողները ՆԿին վերաբերւում են ոչ-դրական: Նրանք քիչ տեղեկացուած են հանրակրթական դպրոցի ներառական դասարաններում առանձնայատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթութեան կառավարման հարցերից:

Հետաքրքիր տուեալներ ստացել ենք հարցման հետեւեալ հարցերի վերաբերեալ՝ «Ինչպէ՞ս կը գնահատէիք ՆԿԿի դրուածքը ձեր դպրոցում» եւ «Ինչպէ՞ս կը գնահատէիք ՆԿԿի աշխատանքները ձեր դպրոցում»:

Տնօրէնների 68.4%ը նշել է, որ իրենց դպրոցում ՆԿԿի դրուածքը գերազանց եւ լաւ է, 19.3%ը՝ բաւարար է նշել, իսկ 5.3%ը գնահատել է անբաւարար, իսկ 7%ը դժուարացել է պատասխանել այս հարցին: Դպրոցների փոխտնօրէնների, դասղեկների, ուսուցիչների եւ դասվարների կողմից տրուած պատասխանները նուազ արտայայտուած էին: Այստեղ նրանցից 22.2%ը գնահատեց իրենց աշխատանքն անբաւարար (8.5%) կամ էլ դժուարացան տալ գնահատական՝ դպրոցում ՆԿԿի աշխատանքին:

Չնայած մեծամասնութիւնը համարում է ՆԿԿի աշխատանքը բաւականին կարեւոր, միայն 82.4% տնօրէններ, 62.6% փոխտնօրէններ, 59.2% դասղեկներ եւ 63.8% ուսուցիչներ եւ դասվարներ դրական գնահատեցին իրենց կողմից իրականացուող աշխատանքը հետազօտուող խնդրի վերաբերեալ: Բաւականին մեծ տոկոս է կազմում նաեւ այդ աշխատանքը բաւարար գնահատած հարցուողները (14.0%),

6.7%ը անբաւարար է գնահատել, իսկ 13.1%ը դժուարացել է պատասխանել այդ հարցին:

Հարցուողների ճնշող մեծամասնութիւնը անկեղծօրէն պատասխանել են, որ աշխատանքի այդ ուղղութեամբ նրանք հիմք է ընդունել իրենց գիտելիքները, սեփական փորձը, այն դէպքում, երբ միայն 3.5% մանկավարժներ հանրակրթական դպրոցի կառավարման աշխատանքում կիրառել են տարբեր գրականութիւն, յօդուածներ, մեթոդական ձեռնարկներ (Նկար 3):

Նկ. 3 **ՆԿԿի հիմնախնդրի վերաբերեալ հարցուողների վերաբերմունքի ցուցանիշներ**



1. ՆԿԿԻ կարեւորութիւնը
2. Հիմնւում են սեփական գիտելիքի եւ փորձի վրայ
3. Կիրառում են մեթոդական գրականութիւն
4. Ծանօթ են յատուկ գրականութեանը
5. Տուեալ հիմնախնդրի վերաբերեալ յատուկ գրականութեան մշակման անհրաժեշտութիւն

Նկարից երեւում է, որ «Արդեօք ծանօ՞թ էք ՆԿԿի հիմախնդիրների վերաբերեալ յատուկ գիտամեթոդական գրականութեանը» հարցին տնօրէնների, փոխտնօրէնների, դասղեկների, ուսուցիչների եւ դասվարների, ինչպէս նաեւ բարձր կարգի ուսանողների 19.4%ը դրական են պատասխանել, մինչ 80%ից աւելին ծանօթ չէր նմանատիպ գրականութեանը: Այս դէպքում կարեւոր է ընդգծել, որ այդ պատասխանողներից միայն 3.5%ը նշեցին, որ իրենց աշխատանքում կիրառում են ներառական կրթութեան եւ դպրոցի կառավարմանը վերաբերող մեթոդական գրականութիւն:

Այս տուեալները փաստում են, որ ներառական դպրոցների տնօրէններ, փոխտնօրէններ, դասղեկներ, ուսուցիչներ եւ դասվարներ ՆԿԿի եւ կազմակերպման հարցերում գրեթէ չեն կիրառում գիտական եւ գործնական ոլորտի ձեռքբերումները, չեն հիմնւում մեթոդական զարգացումների, այլ միայն՝ սեփական գիտելիքների եւ աշխատանքային փորձի վրայ: Սրանից ելնելով կարելի է ենթադրել, որ տուեալ հիմնահարցի ոչ-բաւականաչափ տեսական մշակուած լինելը եւ առկայ մեթոդական մշակումները, զարգացումների թոյլ կիրառումը ցածրացնում է հանրակրթական դպրոցներում ՆԿԿի աշխատանքները:

Ներառական դպրոցների գրեթէ բոլոր տնօրէններ, փոխտնօրէններ, դասղեկներ, ուսուցիչներ եւ դասվարներ, ինչպէս նաեւ բարձր կարգի ուսանողներ նշեցին ՆԿԿի մեթոդական առաջարկութիւնների մշակման անհրաժեշտութեան մասին:

Հետազօտութիւնը յստակօրէն փաստում է, որ ՆԿԿն հանդիսանում է կարեւոր եւ արդիական հիմնախնդիր: Դրանց մասին փաստում են նաեւ մտահոգութիւնները, կարծիքները դրանց անհրաժեշտութեան մասին: Միւս կողմից, նրանց մեծամասնութիւնը ընդունում է իրենց դպրոցներում այս աշխատանքի շատ թոյլ դրուածքը եւ ընդգծում ուսումնասիրուող հիմնահարցի վերաբերեալ իրենց անբաւարար իրազեկուածութիւնը: Հիմնական պատճառներից նրանք առանձնացնում են՝

- ՆԿի արդիւնաւէտ կառավարման համար համապատասխան ծրագրերի, մեթոդական աշխատութիւնների, մանկավարժական առաջարկութիւնների բացակայութիւնը՝ յատկապէս հայերենով,
- Յատուկ սեմինարների, որակաւորման բարձրացման դասընթացների, այդ ուղղութեամբ աշխատանքային փորձի փոխանակման միջոցառումների բացակայութիւն,
- Դպրոցի մանկավարժական կազմի ղեկավարութեան կողմից տուեալ խնդրի շուրջ համապատասխան ուշադրութեան բացակայութիւն,
- Իրականացուող ՆԿի ծրագրի համար յատուկ փաստաթղթերի, ծրագրաւորման եւ հաշուետուութիւնների անբաւարար մշակուած լինելը:

Ծրագրային հետազօտութիւնների առնչութեամբ մեզ հետաքրքրում էր նաեւ հարցուածների վերաբերմունքը՝ հանրապետութիւնում ՆԿԿի համակարգի փոփոխութիւններին, մասնաւորապէս այդ դպրոցներում համապատասխան աշխատանքների դրուածքի կատարելագործման ուղղութեամբ:

Հարցուածների 85%ը ընդգծում էր դրա իրականացման անհրաժեշտութեան մասին: Այդ վերափոխումների առնչութեամբ նրանք նշեցին հետեւեալ հիմնական ուղղութիւնները՝

1. Հանրակրթական դպրոցում ՆԿի արդիւնաւէտ կառավարման համար օրինակելի ծրագրի մշակում, որպէսզի աշխատանքի դրուածքը կատարելագործուի.

2. Աշխատանքի կառավարման, ծրագրաւորման, հաշուառման եւ հաշուետուութեան փաստաթղթերի կատարելագործում.

3. Հանրակրթական դպրոցում ՆԿի արդիւնաւէտ կառավարման համար միջոցների, մեթոդների, կազմակերպման, կառավարման համապատասխան ձեւերի կատարելագործում,

4. ՆԿԿի համար մեթոդական առաջարկութիւնների մշակում եւ կատարելագործում,

5. ՆԿԿի դրուածքի համար յատուկ սեմինարների, քննարկումների, փորձի փոխանակման միջոցառումների կազմակերպում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայաստանի Հանրապետութեան Օրէնքը Կրթութեան Առանձնայատուկ Պայմանների Կարիք Ունեցող Անձանց Կրթութեան Մասին (Ընդունուել է 25 Մայիս 2005ին):

[2] Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Ասատրյան Մ.Ա., Ցոլակյան Թ.Ֆ. *Կրթության Համակարգի Կառավարման Հիմունքները, Ուսումնամեթոդական Ձեռնարկ, Առաջին Մաս*, Երեւան, 2003:

[2] M. Ainscow, T. Booth, A. Dyson, *Improving Schools, Developing Inclusion Improving Learning*, Routledge, 2006, էջ 232:

[3] Danture Wickramasinghe, Ahmad Fauzi Abdul Hamid and Kashan Pirzada, "Contemporary Issues in Management and Social Science Research," *Procedia - Social and Behavioral Sciences*, Volume 172, էջ 1-808 (27 January 2015), http://www.sciencedirect.com/science/article/pii/S1877042815004073 :

[4] S. Stubbs, *Inclusive Education, Where There Are Few Resources*, Oslo, Atlas Alliance, 2002, էջ 3, 23:

A STUDY ON INCLUSIVE EDUCATION MANAGEMENT IN THE REPUBLIC OF ARMENIA PUBLIC SCHOOLS

(Summary)

MELINE A. GRIGORYAN
meline.grigoryan@yahoo.com

The study is the result of a survey conducted in the inclusive public schools in the Republic of Armenia, regarding the awareness and academic knowledge of the school principals, vice-principals, form-masters, teachers and class teachers as well as students of higher educational institutions.